

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Ստորագրագրացիք դիմում են ուղղակի

Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1878 թ-ից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի դիրքը և պրօգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵՄԲԵՐ ԷՆՈՒՆԳԻՒՆԵՐ: ԲՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԸՆՈՒՆԶԻՆ ԷՄԵՐՍՆԵՐԸ կը ծախվեն 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներէն պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան հրէաների մասին, — Ներքին տնտեսութիւն: Ռուս-թիւրքաց հաշտութեան զանազան շրջաններ: Ներքին լուրեր: Արտաքին տնտեսութիւն: Ֆրանսիա: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր: խառն լուրեր: «Մշակի» հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Ամեն տեղից:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀՐԷԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի որ և է ազգ, որ ունեցել է գոյութիւն աշխարհիս երեսին, որքան էլ անյայտ լինէր մարդկութեան ընդհանրութեան համար, — այնու ամենայնիւ իր շըրջանի մէջ կունենայ իր պատմական նշանակութիւնը: Կը յիշեց-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԵՆ ՏԵՂԻՑ

Ներողութիւն եմ խնդրում քեզանից, ընթերցող, որ այսքան ուշացրի «Ամեն տեղից» գրվածք մտցնել «Մշակի» մէջ: Գուցէ դու չես էլ հետաքրքրվում այդ գրվածքներով, բայց ես ինքս ինձ միջնաբերդ համար, ենթացողում եմ, որ դու նեղացած ես ինձանից և ես ինձ արդարացում եմ: Արեւելեան հարցը այնպէս է գրաւել բոլորի ուշադրութիւնը, բոլոր լրագիրները այնքան են գրում այդ հարցի վրա, որ շատ քիչ տեղ են տալի զանազան լուրերին, որոնցից ես միշտ օգուտ եմ քաղում: Ամեն տեղ, ամեն մարդուց այժմ միայն լսում ես արեւելեան հարց, քրիստոնեաների վիճակ և այլն, մինչև անգամ հեռագրական ընկերութիւնն էլ գրեթէ միայն այդ հարցին վերաբերեալ հեռագիրներ է ուղարկում, թէպէտ մենք նոյնքան հեռաքրքրվում ենք Ֆրանսիայում, իտալիայում, Գերմանիայում, Սպանիայում և այլ երկրներում պատահած քաղաքական և ուրիշ անցքերով, ինչքան հեռաքրքրվում ենք արեւելեան հարցով:

Այս անգամ լրագրական լուրերի պակասու-

նենք ընթերցողներին հրէաների ծաղկեալ դրութիւնը Փինիկեցիների ժամանակ և հռոմայեցիների իշխանութեան տակ:

Որքան այս ազգը հարուստ էր և ինչքան հարստութիւն ձեռք բերեցին հռոմայեցիները նուաճելով այդ երկիրը: Յետոյ միջին դարերում, խաչակիր պատերազմների ժամանակ եւրոպացիները գալով Փոքր-Ասիա Հայաստանի և Հրէաստանի վրայով, ծանօթացան այդ երկրների հին քաղաքակրթութեան հետ, քանի որ Լւրոպայում տիրապետում էր խաւարը...

Թեան պատճառով օգուտ կը քաղեմ այն երկու նամակներից, որ ես նորերումս ստացայ Ներանից և Ա. քաղաքից: Ահա Ներանի նամակը:

«Գեղ յայտնի է, որ Ներանի հոգեւոր դպրոցի ուսուցիչներից մի քանիսն ստանում են ամսական 25 ռուբլ շաբաթական 24 դասի համար: Գիտես նոյնպէս որ երբ մեր ուսուցիչները մասնաւոր դասեր են դնում, որ կարողանան պակասորդը լրացնել և իրանց երեւնի հինգ, վեց հոգուց բաղկացած մեծ ընտանիքը կերակրեն, ինչ անգամ քիչ է կախ անում պ. տնտեսը և ինչպէս հոգաբարձուները իրանց կուշտ փորը ի նկատի ունենալով, ասում են:

— Ի՞նչպէս կարելի է այդքան դասեր տալ, էլ այդ մարդիկը (ուսուցիչները) ինչպէս պէտք է պարագան ուսումնարանում: Մեր երեխաները գրկվում են ուսուցչի թարմութենից (կարծես ուսուցիչները երեխաները չեն գրկվում, երբ հայրը միջոց չունի նրանց համար աւելորդ կօպէկի միջոց առնել), այդ խաբէբայութիւնն է և այլն:

«Այսպիսի դրութեան մէջ մեր ուսուցիչներից երկուսը, չը կարողանալով այսպիսի թանգ տալին 25 ռուբլով ապրել, դիմում են հոգաբարձուներին մի յայտարարութեամբ, որտեղ կրկին անգամ իրանց դրութիւնը պարզելուց յետոյ, որոշ յայտնում են, որ եթէ իրանց ուսնիկները չաւելացնեն, նոքա կը թողնեն ուսումնարանը: Հոգաբարձութիւնը դեռ երկար այդ հարցը դէս ու դէն ձգում, վերջը աւելացնում է 10 ռուբլ:

Նայելով հրէաների վրա ընդունակութեան կէտից, կարող ենք ասել որ այդ ազգը ամենաշնորհաւոր ազգերից միւս կարող է համարվել: Որքան զիտնականներ, երեւել երաժիշտներ, բանաստեղծներ, արդիւնազորներ ընծայեցին հրէաները արդեան Լւրոպային:

Չը նայելով հրէական ազգի ընդունակութեան, հին դարերից սկսած մինչև այս վերջին ժամանակները, հրէաները միշտ ենթարկվել են քրիստոնեաների հալածանքներին: Նրանք զրկված էին մարդկային իրաւունքներից. պապերի արած սխալները պահանջում էին թողնելից: Այդ հալածանքներն են եղել պատճառ, որ հրէական ազգի մէջ խեղդվեցաւ մարդկութեան ձայնը, այդ ազգը դարձաւ ցածահոգի և խաբէբայ:

Ընդհանուր կէտից անցնենք մասնաւորին: Ինչպէս որ Լւրոպայում, այնպէս էլ հին Արաստանում և յետոյ մասմեդական դարերում տիրապետութեան տակ հրէաները միշտ ենթարկված էին հալածանքներին:

Միայն հին Հայաստանում հրէաները կատարեալ ազատութիւն և հաւասար իրաւունքներ էին վայելում և այդ պատճառով հրէաները կատարելապէս լուծվե-

ցան հայոց տարրի մէջ ղեռ քրիստոնէութենից շատ առաջ: Հայաստանը գուցէ միակ երկիր էր ամբողջ աշխարհիս երեսին, որտեղ քրիստոնէութիւնը յայտնվելուն պէս հրէաների մեծ մասը ընդունեցին նոր վարդապետութիւնը տիրապետող ազգի հետ միասին:

Մինչև այժմ մեր վրաստանցի հրէաները կրում են իրանց վրա դարեւոր ճշման դրոշմը և թէև ժամանակակից վրաց ազգաբնակիչներ վարվում են նրանց հետ շատ համբերող ոգով, նրանք այնու ամենայնիւ յետ են մնացել իրանց մտաւոր և բարոյական զարգացմամբ, իրանց բարք ու վարքով չըջապատող վրաց ազգաբնակիչութենից:

Բ. Տ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ԹԻՒՐԿԱՑ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

«Kölnische Zeitung» լրագիրը հրատարակել է Սան-Ստեֆանոյում ստորագրված խաղաղական պայմանների բովանդակութիւնը: Այդ բովանդակութիւնը աւելի մանրամաստեղեցութիւններ է տալիս քան թէ մինչև այժմ հրատարակվածները:

Դաշնագիրը բաղկացած է 29 յօդուածներից որոնց համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է:

Բաւարները, ձեր խօսակցութեան հովանաւորող ձեռ նրանց թունաւորում է: Դիւանների հետ զօրծ ունէք, թէ այնպիսի մարդկերանց հետ, որոնք չունենալով կեանքի մէջ երջանիկ բօպէսներ, թշուառութեան լուծի տակ կատարեալ մարդիկ են դարձել, բաւի բուն նշանակութեամբ:

Առաջին նամակը վերաբերում էր մեր ուսումնարանների մէկին, երկրորդը, ընթերցող, վերաբերում է մեր ընտանեկան կեանքին, մեր պատւական ընտանեկան կեանքին, ինչպէս ասում են մեր մեծ տիրացուները, Նամակի հեղինակը ինձ շատ մօտ բարեկամ մի տիկին է: Ահա նամակը:

«Չորս տարի չը տեսնվելուց յետոյ, այսինքն այն օրից, երբ ես ամուսնացայ Ն-ի հետ, դու ինձ այժմ նամակ ես գրում և հարցնում ես թէ, ինչպէս է իմ ընտանեկան կեանքը: Դու գիտես, որ ես պակասեցայ Ն-ի հետ ոչ թէ նրան տիրելու կամ համակրելու համար, այլ որ ազատվեմ այն անտանկի ընտանեկան կեանքից, որ ինձ անդադար հալածում էր: Որքան ժամանակ ես չէի կարող մէկի հետ աւելորդ բօպէս խօսել, մի հիւր ընդունել իմ հայրենական տանը, ծանօթ լինել այնպիսի մարդու հետ, որ ես ուզենայի, այլ պէտք է ճանաչէի այնպիսիներին, որոնց հաւանում էր իմ մայրը: Այդպիսի կեանքը ինձ համար անտանելի էր: Ես բողոքեցի դրան, բայց իմ բողոքը ոչինչ հետեւեց չունեցաւ: Ես սիրեցի մէկին (դու նրան ճանաչում ես)

Անյալա

դարձնում լըշանի օվէնքը լողանալուց առաջ՝ հրաշալի պատկերի վրա։ Հրաշալի էր մեր թիֆլիսի հասարակութիւնը այցելել պ. Մեր-զոնովի ձիթանկարների այդ գեղեցիկ ժողովածուն։ Հանգէսի մէջ գտնուում են նոյնպէս ակուա-մանիւրները, որոնց թիւում նշանաւոր են լինել պատկերները, որոնց թիւում նշանաւոր են մանուկները Պէտէրս յայտնի ակուաբոյսի նկարները։ Կան և մի քանի ֆոտոգրաֆիաներ։ Հանգէսը բաց է ամեն օր, առաւօտեան 9 ժա-մից մինչև 6 ժամ երեկոյեան։ Մուտքը արժէ 50 կոպէկ։ Իսկ չորեքշաբթի օրը 1 ռուբլ։ Ով ուզում է դարձացնել նորը ճաշակը դէպի ձա-րիտ գեղեցիկը, թող այցելէ այդ տեսակ նկար-ների հանդէսները, և ոչ թէ բաւականա՛յն մի-միայն մեծ արճեւտագէտների նկարներից վերց-րած պատճէններով։

Յիւլիւս Ա. Լ. Ի. Բ. մեղ գրում են։ «Մեր վրաս-տանի հրէաները համեմատելով եւրոպական հրէա-ների հետ շատ ստոր են դարձաւորաբար և սար-սափելի մտտիւնաւորութիւնների մէջ մնացած։ Նոքա սաստիկ նախապաշարոված են և առում են ամեն տեսակ նորութիւն։ Նոքա եւրոպական կրթութեան հրէաներին անուանում են հաւատից չեղ վա ծն եր։ Յիւլիւսին հրէաները պարապում են վաճառականութեամբ։ Ամբողջ վաճառակա-նութիւնը նրանց ձեռքն է և նրանք շատ ճարպիկ են ամեն տեսակ ճանապարհներով փողերը վա-տակելու մէջ։ Որքան և հարուստ լինէին Յիւլիւ-սին հրէաները, այնու ամենայնիւ շատ կեղտոտ են ապրում իրանց տների մէջ, և նրանց հա-զուատին նայելիս մարդուս մէջ զզվանք է դարձ-նում։ Ունեն հինգ սինագոգներ, որոնց կից կան ուսումնարաններ։ Այդ ուսումնարանների մէջ ուսումը նրա մէջն է բաղկանում որ նրանց գիտ-նական խախտմանը սաստիկ ծեծում են ուսումը առնող երեխաներին։ Հին ժամանակները վրաս-տանի հրէաները սաստիկ հալածվում էին քրիս-տոնեաներից։ Պատահում էր որ քրիստոնեա-նեքը քանդում էին հրէաների տները, և հրէա-նեքը իրանց կանանցով և երեխաներով փախ-չում էին քաղաքներից և գիւղերից քրիստոնեայ ազգաբնակչութեան կատաղութենից ազատվելու համար։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻՍ

Սենատի աջակողմեան կուսակցութենից 22 անդամներ բաժանվեցան, որոնք հաւանական է որ կը նստեն ձախակնտրոնում։ Այդ բա-ժանումը մեծ հարված տվեց միապետական-ներին։ աջակողմը գրեթէ բոլորովն տկարա-ցաւ սենատում։ Սահմանադրական խումբը կազմող երեսուն և հինգ անդամներից 22-ը որոնց մէջ գտնվում են գուքս Գ. Պրիշկին-Պասկիւն, Բէրտրան, Լամբէր դը Սէն-Վրուա և այլն, անհամաձայն գտնվեցան իրանց ըն-կերների հետ և յայտնեցին որ անօգուտ է կուսել հանրապետութեան դէմ քանի որ Յը-րանսիայի ժողովուրդը իր ազատ կամքով հաւանում է հանրապետութիւնը և ընդու-նում է նրա դրած օրէնքները։ Հետևապէս իրանք կը հրաժարվեն կարինէտի առաջար-կութիւններին հակառակ քուէ տալուց։ Կա-րինէտը առաջարկած էր մայիսի 16-ից մինչև դեկտեմբերի 14 քաղաքական յանցանքներով դատաւարութեան ընդհանուր ներդու-թիւն տալ և լրագիր ծախելու ազատու-թիւնը չը կաշկանդել։ Կերականները, բո-նապարտիստները և այլ միապետականները կատարած յարձակումն իրանց բաժանված ընկերներին, սահմանադրական սենատորների վրա և նրանց անուանում են մասնիչ, խա-բեքայ և այլն։ Բայց միթէ հանրապետական-ները կարող են վտահել նրանց, այդ էլ կասկածելի է։ Գուցէ նրանք երբեմն կը ձյո-նակցեն ձախակողմեաններին և երբեմն իրանց հին ընկերներին։ Եթէ 22-ները հաստատ մնալով իրանց որոշումի մէջ, նորից չը միա-նան աջակողմեանների հետ և չը զորաց-նեն նրան, Յըրանսիան ազատ կը մնայ ներքին խռովութիւններից, գոնէ արուեստահանդիսի վեց ամիսներում։ Հանրապետականները աշ-

խատում են խոհեմութեամբ իրանց մտնեցնել աջակողմից բաժանված կուսակցութիւնը և իրանց մէջ խառնել։

Մարտի 3-ին դէպուտատների կատարված ընտրութիւնները յայտնապէս ցոյց են տալիս թէ մայիսի 16-ի միւնիստրութիւնը շատ ճշն-շեւ է ժողովուրդի ընտրողական ազատութիւնը։ Մինչև այժմ դէպուտատների ժողովը վճռած է 35 յետադիմական երեսիօնականների խա-ղախութեամբ ընտրված լինել և ոչնչացում է նրանց ընտրութիւնները։ Հրաման տրված էր որ դրոշմից 22-ի տեղ նոր ընտրութիւն-ներ լինեն մարտի 3-ին։ Ընտրութիւնները կատարվեցան և այդ 22-ից որոնք էլ չա-մարձակվեցան իրանց կանգնաւոր ներկա-յացներ 4-ը միայն վերատրին ընտրվեցան։ Իսկ մնացած 18 միապետականների տեղ հան-րապետականներ ընտրվեցան ձայների շատ մեծ բազմութեամբ։ Կառավարութիւնը ամե-նափոքր ձեռնում չարաւ, բոլորովն ազատ թո-ղեց ժողովուրդին որ ուզեցած մարդկերանց ընտրէ և արդիւնքը այս եղաւ որ մայիսի 16-ի միւնիստրութեան շնորհով ընտրված կան-դիդատները այս անգամ շատ քիչ ձայն կա-րողացան ունենալ։ Մինչև այժմ 477 դէ-պուտատների ընտրութիւնները քննված և վաւերացված են և դրանցից 123-ը միայն պատկանում են աջակողմին։

Մարտի 3-ի ընտրութիւնների ժամանակ յետադիմական կանդիդատներից մի քանիսը ամեն գոյնիւրով երևեցան ժողովուրդին։ այստեղ իբրեւ բոնապարտական, այնտեղ իբրեւ օրինա-ւորական։ մի տեղ իբրեւ հանրապետական, ուրիշ տեղ իբրեւ սահմանադրական։ մի ըն-տրողական շրջանում իբրեւ կառավարութեան կուսակից, իսկ այլ շրջանում իբրեւ կառա-վարութեան դիմադիր, վերջապէս ամեն դոյ-նեքով երևեցան ժողովուրդին, ամեն կերպով աշխատեցին, բայց այս անգամ չաջողվեցան, չը կարողացան ընտրվել։ Յըրանսիական ժո-ղովուրդը սկսել է իմանալ իր ձայնի նշանա-կութիւնը և զգոյշ է գառել իր ընտրութիւն-ների մէջ։ նա չի ուզել որ իր սրած թրով իր վեղը կտրեն։

Հասարակական շինութիւնների միւնիստր պ. Յըրէյսինէ գնել է մի քանի փոքրիկ ընկե-րութիւնների գործածած երկաթուղու գի-ծերը որպէս զե կառավարութիւնը աւելի ընդարձակէ այդ գծերը և աւելի կանոնա-ւորապէս գործածէ։ Կառավարութիւնը ծախ-սում է գրեթէ 330 միլիոն ֆրանկ այդ եր-կաթուղու գծերը գնելու և նրանց վերաբե-րեալ նոր շինութիւններ անելու համար։

Մարտի 7-ին (փետրվ. 23), միւնիստրների ժողովը գումարով լրացաւ նախագահու-թեամբ, զբաղվել է արտաքին քաղաքակա-նութեան հարցերով։ Արտաքին գործերի մի-նիստր պ. Վալդիւնովս կարգեցել է մի հե-ռագիր, Բերլինում Ֆրանսիական դեսպան պ. դը Սէն-Վալդէրից ուղարկված որ պաշտո-նապէս իմաց է տալիս թէ Բիսմարկ իշխանը ընդունել է կոնգրէսին նախագահել և վերջ-նական որոշումը տրված է որ կոնգրէսը գու-մարվի Բերլինում։ Միւնիստրների ժողովը որո-շել է որ Ֆրանսիայի կողմից պ. Վալդիւն-ովս ներկայ գտնվի կոնգրէսում։ Այդ ժողովի մէջ խօսվել է նաև Փարիզի արուեստահա-նիսի գեղարուեստական բաժնում Գերմա-նիայի մասնակցելու վերաբերութեամբ։ Գեր-մանիայի կայսրը ինչն անձամբ յայտնել էր Ֆրանսիական դեսպանին թէ յատուկ հրո-վարտակ հանած է որ Գերմանիայի նկարիչ-ները և քանդակագործները մասնակցեն ա-րուեստահանդիսին։ Այդ լուրը մեծ ուրա-խութիւն է պատճառած թէ Ֆրանսիայիսե-րին և թէ գերմանացիներին։

Անգլիայի թագաժառանգ իշխանը մարտի 6-ին (փետրվ. 22) այցելել է Տրոյադէրոյի պալատը և շատ հետաքրքիր և գոհ է եղել իր այցելութենից։ Նրան առաջնորդել են պատած ժամանակ պ. Տէստրեն դը Բորդ, հո-

ղադործութեան և վաճառականութեան մի-նիստրը և պ. Կրանց, արուեստահանդիսի ընդհանուր վերակացուն։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՒՄՅԻՅ

Կ. Պոլիս, 2 մարտ 78

Եւրոպական պատերազմի երկուղը կը սաս-տկանայ։ Հազիւ թէ սկսանք ուրախանալ խա-ղաղութեան հաստատութեամբ և ահա նորէն մտքերը սկսան վրդովիլ։ Մենք յոյս ունենք դեռ որ այդ երկուղը անհիմն կը լինի։

Հայ գորավար Շօլիօնիկովի մահը զոր լրա-գիրները հրատարակեցին այստեղ, ամենուս ալ շատ ցաւ պատճառեց։ Այստեղ հրատարակու-ցաւ նաև թէ Վեհափառ Կաթողիկոսը դէպի Պետերբուրգ գնացած է շնորհաւորելու ուսանաց յայտեր «խաղաղութեան կնքվելը»։ Վաղուց կը խօսէին թէ Վեհափառ պետի ներկայանալ Թա-գաւոր Կայսեր։ Արդեօք ստոյգ են այս լուրեր։ Խորէն եպիսկոպոսը արդէն գնացած է Ռուսիա կեկեցական գործերով։

Փետրվար 21-ին, Ս. Վենդեանց տոնին օրը, հանդիսաւոր պատարագ եղաւ Այ-Ստեֆանոսի հայոց եկեղեցինում։

Ռուսերը Այ-Ստեֆանոս գալէն յետոյ մեր աղ-գային թերթերը սկսած են շատ ազատ գրել։ մինչև անգամ կը համարձակին թերթական Հայաստանի ինքնավարութիւն պահանջել։ Այս գիշեր փա-ռաւոր հանդէս պիտի լինի Օրթագիւղի հայոց թատրոնի մէջ «Ալեքսանդր Փարիզ» խաղը ներկա-յացվել է յետոյ պ. Հ. Ալեքսանյան, առաջին կարգի դերասանը, շարժումներով պիտի կարգայ Նալ-բանդեանի երգը, ինչպէս ուրիշ անգամ ալ կար-դացած է Պատկանեանից։ «Շիմի էլ լուենք»։ Մեծ ոգևորութիւն կայ այժմ այստեղ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Politische Correspondenz» լրագրի Կ. Պոլիսի թղթակցը հաղորդում է, որ Բ. Կուռը մտադիր է հրատարակել հայտնութեան պայմանագիրը ոչ թէ միայն այնպէս, ինչպէս նա հաստատված է, այլ և նրա սկզբնական ձևը։ Սկզբնական պայ-մանագիրը շատ խիստ էր, յետոյ ուսանաց պե-տութիւնը մեծ զիջումներ առաւ։ Այս հանգա-մանքը շատ լաւ տպագրութիւն ունեցաւ թեր-թերի վրա։ Մի և նոյնը չէ կարելի ստել յոյների և հայերի մասին։ Հայերը շատ անբաւական են, որ ամբողջ Հայաստանը չը միացաւ Ռուսաս-տանի հետ։ Հայերը իրաւացի վախենում են, որ ուսանաց գործերի թիւրքիս մաքրելուց յետոյ, թերթաց Հայաստանը կը լցվի մահմետական-ներով։ Այսպիսով աւելի ոյժ կստանան քուր-դերը, հայերը այդ դրերու և անհաշտ թշնամի-ները։ Այս հանգամանքը առիթ տուեց հայոց պատրիարքին այս հարցին վերաբերեալ մի դը-րութիւն ներկայացնել ուսանաց կառավարու-թեան։

—Լրագիրներում կարդում ենք, որ անգլիա-կան պարլամենտի անդամ Կեմբել հարցերը կա-ռավարութենից, մտադիր է արդեօք Բիկոնս-վիլի կարէնետը վերջ գնել յունաց գաւառների արեւահեղութեանը, մինչև կոնգրէսը որոշէ նը-րանց դրութիւնը։

—Լրագիրներում կարդում ենք, որ նորե-րում Անգլիայում լոյս տեսաւ «Նորին Թագա-ւորական Բարձրութեան Իշխան-Ամուսնի կեանք» («The Life of His Royal Highness the Prince Consort» By Theodore Martin) գրքի երրորդ հա-տորը, որ Վիկտորիա թագուհու ամուսնի կեն-սագրութիւնն է։ Այդ գրքից երևում է, որ այժմ Բիկոնսֆիլդը հետևում է նոյն քաղաքականու-թեան, ինչ քաղաքականութեան հետևում էր Անգլիան յիսուն տարի սրանից առաջ։ «Անգ-լիան և Եւրոպան, դուռն է իշխանը իր յիշատա-կարանի մէջ, սաստիկ հետաքրքրված են այն հարցով, որ Կ. Պոլիսը, կամ թերթաց երկիր-ները Ռուսաստանի ձեռքը չընկնեն։ Հակառակ դէպքում նրանք պատրաստ են պատերազմ յայ-տնել Եւրոպական հաւասարակշռութիւնը պահ-պանելու համար»։ Գրքից երևում է, որ իշխանը նոյնքան առում էր Պրուսիային, որքան Ռու-սաստանին։ Պրուսիային նա անուանում է «Ռու-սաստանի հրամանների գործիչ»։ Այն ժամանակ մտածում էին բաժանել Ռուսաստանը, Գրիմը տալ թերթականին, Ֆրիլանդիան Շվեյցարիային և վերականգնել լեհաց իշխանութիւնը։

—Վիեննայի «Presse» լրագիրը հաղորդում է, որ թերթաց Սուլթանը առաջին աստիճանի Մեջլիսիէ շքանշան տուեց օրիորդ Բեռդետ Կուտսեն, որ անդադար հոգսեր էր տանում այն թերթերի համար, որոնց պատերազմի ժամանակ թողնում էին իրանց տները և փախչում էին Կ. Պոլիս։ Այդպիսի պատւին կինը թերթիկայում առաջին անգամն է արժանանում։

«Politische Correspondenz» լրագիրը հաղորդում է, որ Ռուսիայի օրինակին հետեւելով Սերբիայի արտաքին գործերի մինիստր Րիտտը մի գրու-թիւն ներկայացրեց մեծ պետութիւններին, որ-տեղ որոշված են Սերբիայի պահանջները։ Գրու-թեան մէջ Րիտտը այն միտքն է յայտնում, որ Սերբիան նոյնպէս պէտք է մասնակցէ կոնգ-րէսին։

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինի «Kladderatsch» ծաղրական լրագրի մէջ պատկերացրած է լուրջ Բիկոնսֆիլդը հրէշա-ւոր քթով, իսկ Ռուսաստանը ինչ որ ոյժ ունի ձեռքերում ձգում է նրա քիթը և աշխատում է դարձեալ երկարացնել նրան։

Այս օրերս փարիզում ծախվել են 177 հետա-քրքրական ձեռագիրներ որոնց մէջ գտնվում էր պ. թերթից մի ուսու դիպլոմատի գրված մի նա-մակ որ Ֆրանսիային պատահելու դժբաղդու-թիւնները, պատերազմը և նրա հետեւանքները գուշակում էր։ Այդ նամակը ծախվել է 190 ֆրանկով։ Մի ուրիշ նամակ էլ կար որ անուանի գէներալ Կոնգէի մօր, Մարգարիտ դը Մոնմորան-սիի ձեռքով գրված էր։ Սա խնդրում է իր փոքր որդուն (իշխան դը Կոնգէ որ այն ժամանակ դեռ ինչ տարեկան էր) տալ Օսէրի եպիսկո-պոսութիւնը և կարծում է որ նրա դեռ փոքր լինելը արգելք չի լինի եպիսկոպոսութեան պա-տանունը ստանալու, քանի որ կարդինայ է նրա կնքանայրը։ Մենք գիտէինք որ այդ երկանիկ ժա-մանակներում գնդապետի (կոմտէ) պաշտոն էին տալիս փոքրիկ երեխաներին որոնք դեռ իրանց սանտուի ստիւքը ծեծում էին դիպով։ Բայց երևում է որ երեխաները օրօրոցի մէջ եպիսկո-պոս էլ լինում էին։ Այդ նամակը ծախվել է 34 ֆրանկով։ Մարչալ Բատոմիլիցից գրաթ Շաֆինի գրված մի նամակ ծախվել է 310 ֆրանկով։ Այդ նամակը շատ սրտաշարժ է։ Մարչալը աղաչում է իր բարեկամին որ իր համար միջնորդելով ազատէ Բատտիլիա բանտից, ուր 12 տարի էր որ բանտարկվել էր։ Նրան բանտարկել տուող կարդինալ Ռիշլիօն մեռած էր։ Այդ երկար ժամանակվա բանտարկութիւնը յիշեցնում է մեղ մի անեկոյտ որ ցոյց է տալիս թէ մարչալ Բատոմիլիցի ինչպէս քալ գինուր, նոյնպէս և քաղաքավարի և պատրաստաբան էր իր պատա-խանների մէջ։ Նրը Լուի XIII տեսաւ մարչալին բանտից արձակվելուց յետոյ, հարցրեց նրան թէ քանի տարեկան է։ Ֆիստոն տարեկան եմ, տեղ արքայ, պատասխանեց։ Նրը զարմանք յայտնեց թագաւորը որ գիտէր թէ նա աւելի մեծ էր, մարչալը պատասխանեց։ «Տեղ արքայ, Բատտի-լիայում անցկացրած տարիներն չեմ հաշոււ, որով-հետեւ չը կարողացայ այդ տարիները գործածել ձեզ ծառայելու համար։»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Վիեննա, 15/27 մարտի։ Կոմ Իզնատիկը խորհրդակցութիւն ունեցաւ Կոմս Անդրաշի հետ, յետոյ աւստրիացոց կայսրը ընդունեց նրան։ Վիեննայի լրագիրները կոնգրէսը անի-րագործել են համարում։ Նոքա առում են, որ ժամանակ է մտածել աւստրիական շա-հերի վրա։ Կարծում են որ Իզնատիկը յանձ-նարարութիւն է Անգլիայի նպատակներին արդիւք լինել և նրան առանձնացնել։

Նիւ-ԻՌԿ, 15/27։ Անգլիական կառավա-րութեան գործակալները Միացեալ Նահանգ-ներում 18000 ձի են առնում Անգլիայի հե-ծելագործի և թնդանօթների համար։

ԼՕՆԻՕՆ, 15/27 մարտի։ «Daily Tele-gram» լրագրին հեռագրում են Բերայից, որ ուսանաց հետեւալ է հեծելագոր զորքերին հրամայած է Բոլսաուից Ինկիօլ տեղափո-նել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի։ Նրեկ Մոս-կվայում Դանիլով վանքում կատարեցին իշ-խան Չերկասկոյ թաղման հանգիստը։

ԼՕՆԻՕՆ, 15/27 մարտի։ Նրեկ Մեծ Իշ-խան Նիկոլայոյ ճաշեց Սուլթանի մօտ։ Սուլ-թանը ընծաներ տուեց Մեծ Իշխանի ավի-տային, իսկ ԵՄԺ Իշխանին շքանշան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի։ Բերլինից հե-ռագրում են «Перед. Вѣд.» լրագրին, որ Իզնատիկը Վիեննայում լաւ ընդունելութիւն գտաւ և իր յանձնարարութիւնը աշողու-թեամբ կատարեց։

